# ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

## ԴԱՍ 2.19. Արևելյան Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

. . .

*Երկաթուղին լեռնային շրջաններում կառուցվածների մեջ ամենաերկարն է: Շահագործման է հանձնվել 2006թ-ին, երկարությունը 1956 կմ է, ամբողջությամբ էլեկտրիֆիկացված է, գնացքների միջին արագությունը մինչև 160 կմ/ժ է: Երկաթուղու՝ Տանգ-Լա կայարանի հատվածում երկաթգծի բարձրությունը 5072 մ է (համեմատե՛ք Մեծ Արարատի բարձրության հետ): Երկաթուղային վագոններում տեղադրված են թթվածնի պարաներ, որպեսզի ուղևորները խուսափեն հիվանդությունից՝ թթվածնային քաղցից: 2014թ երկաթուղին Լհասայից խորացել է ավելի արևմուտք և հասել Շիգաձե:*